



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**Ի ՊԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
 ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

Շաբաթ, Մայիս 20-ի երեկոյեան ժամը 6:30-ին, ճաշկերոյթ մը տեղի ունեցաւ Տեր եւ Տիկին Չարլզ եւ Ճուլի Կալեաններուն բնակարանը, Էնսիսօ, ի պատիւ Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Տիար Վարդան Ոսկանեանին:

Ձեռնարկը կազմակերպուած էր Հայ Դատի Յանձնախումբի կողմէ: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց իր օրհնութիւնը:

**ANCA RECEPTION IN HONOR OF
 ARMENIA'S FOREIGN MINISTER**

On Saturday, May 20, a dinner-reception took place at the home of Mr. and Mrs. Charlie and Julie Ghailian in honor of Vartan Oskanian, the Foreign Minister of the Republic of Armenia.

The reception was organized by the Armenian National Committee. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was in attendance and delivered the evening's invocation and benediction.

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴԱՏԻ ԹԵԼԵԹՈՆԻՆ

Կիրակի, Մայիս 21-ին, տեղի ունեցաւ Հայ Դատի աշխատանքներուն ի նպաստ հանգանակային թելեթոնը:

Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ թելեթոնին, փոխանցեց իր քաջալերանքի եւ յաջողութեան օրհնութիւնները: Այս առիթով ան յանուն Ազգ. Առաջնորդարանին կատարեց 25,000 տոլարի նուիրատուութիւն մը:

PARTICIPATION IN ANCA'S TELETHON

On Saturday, May 21, the Prelate was present at the Armenian National Committee's Telethon, during which he conveyed his blessings and also presented the ANCA with a \$25,000 check on behalf of the Western Prelacy.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԶՈՐՈՆԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Ռիվըրսայտի Զորոնա քաղաքին մէջ, ուր աւելի քան տարի մը առաջ պաշտօնապէս հիմը դրուեցաւ Զորոնայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքին, ամսական դրութեամբ Ս. Պատարագ կը մատուցուի: Անցեալ Կիրակի, կէսօրէ ետք ժամը 2-ին տեղի ունեցաւ Ս. Պատարագ, ղըպտիներու Ս. Էնթընի եւ Ս. Ապանուպ եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագը մատուցանեց Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոգշ. Տ. Պարթեւ Կող. Կիւլիմեան: Հայր Սուրբին սպասարկեց Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Սարկաւազներէն՝ Սուրեն Հագարեան:

ՆԱԵԻ ԼԱ ԶՐԵՍԵՆԹԱՅԻ ՄԷՋ

Զրեսենթա Հովիտի ծխական համայնքը կը յայտնէ որ ծխական այս շրջանին մէջ սարկաւազներու անդրանիկ ձեռնադրութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունիսի 11-ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 1ին, Ս. Պատարագի ընթացքին, Լա Զրեսենթայի Մոնթրոք փողոցին վրայ գտնուող Unity Church of the Valley եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

HOLY MASS AT THE CORONA AND LA CRESCENTA PARISHES

On Sunday, May 21, Holy Mass was offered at the Armenian Apostolic Church of Corona, Riverside County, at 2:00p.m., at the St. Anthony and St. Abanoub Coptic Orthodox Church. Holy Mass was conducted by our Prelacy's Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, assisted by Deacon Suren Hazarian of St. Garabed Church in Hollywood.

On the afternoon of Sunday June 11, the Prelate will conduct Holy Mass and deliver the sermon at the Armenian Apostolic Church of La Crescenta, at the Unity Church of the Valley on Montrose. During Mass, ordination of deacons will take place for the first time at this parish.

Ի ՊԱՏԻ ԾԱՆՈՅԵԱՆ ԱՍՈՒԻՆ

Կիրակի, Մայիս 21-ին, կ.ե. ժամը 1-ին, Վեն Նայսի Ս. Պետրոս եկեղեցւոյ “Գարակեօզեան” սրահին մէջ տեղի ունեցաւ մեծարանքի ձեռնարկ մը, որուն ընթացքին «Ս. Ներսէս Շնորհալի» մետալով պատուըւեցան Տէր եւ Տիկին Արփիար եւ Յերմինէ Ճանոյեան:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ներկայ ըլլալով հանդիսութեան, Առաջնորդ Սրբազան Զօր եւ իր կողմէ շնորհաւորեց մեծարեալ ամուլը:

RECEPTION IN HONOR OF MR. AND MRS. ARPIAR AND HERMINE JANOYAN

In the afternoon of Sunday, May 21, a special reception was organized at the “Karagozian” Hall of St. Peter Arm. Apostolic Church in Van Nuys, to honor Mr. and Mrs. Arpiar and Hermine Janoyan with the “St. Nerses Shnorhali” Medal.

H.E. Archbishop Yeprem Tabakian attended the reception and conveyed the Prelate’s blessings and well wishes.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 88-րդ տարեդարձին առիթով, Կիրակի, Մայիս 28-ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Հանրապետական Մաղթանք պիտի կատարուի, իսկ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հայկական Եռագոյն դրօշի օրհնութիւն տեղի պիտի ունենայ նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր:

Ս. Պատարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազանը պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

THE 88TH ANNIVERSARY OF THE REPUBLIC OF ARMENIA

On Sunday, May 28, on the 88th anniversary of the independence of the Republic of Armenia, special prayers will take place at all Prelacy Churches.

The Prelate will offer prayers for the Republic of Armenia at Glendale’s St. Mary’s Church where he will also preside over the ceremony of blessing of the Armenian flag.

ՈՂՋԵՐԹԻ ԵՐԵԿՈՅԹ Ի ՊԱՏԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԵՆԴԻՆՐ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ

Մեր թեմէն ներս ազնիւ աւանդութիւն մըն է ընթացաւարտ հայրենի դիւանագիտական ներկայացուցիչները հիւրընկալել ողջերթի երեկոյթով մը:

Չորեքշաբթի, Մայիս 31-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Յոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ հիւրընկալութեամբ Ազգային Վարչութեան, տեղի պիտի ունենայ մեծարանքի հաւաք մը ի պատիւ Լոս Անճելըսի մօտ Զայաստանի Զանրապետութեան գլխաւոր հիւպատոս տիար Գագիկ Կիրակոսեանի, որ աւարտած ըլլալով իր առաքելութիւնը, ի մօտոյ պիտի վերտադառնայ հայրենիք:

A FAREWELL RECEPTION FOR THE HONORABLE GAGIK GIRAGOSSIAN

On Wednesday, May 31, at 7:30 p.m., a farewell reception has been organized in honor of Consul General of the Republic of Armenia, the Honorable Gagik Giragossian, as his term has ended and he will soon be returning to Armenia.

The reception, under the auspices of the Prelate, will take place at “Karapetian” Hall of St. Garabed Church in Hollywood.

CASPSԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԶԱՆՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԷ ՇՐՋԱՆԱԲԱՐՏ ԶԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Զանրային Վարժարաններ յաճախող հայ աշակերտներու դպրոցական կեանքին հետեւող Ազգ. Առաջնորդարանի յատուկ յանձնախումբը՝ որ կը կոչուի CASPS, ունի տարիներու գեղեցիկ աւանդութիւն մը:

Իւրաքանչիւր տարեվերջին, յանձնախումբը կը կազմակերպէ յատուկ հանդիսութիւն մը, պատուելու համար այն հայ շրջանաւարտները, որոնք իրենց երկրորդականի ուսումնական շրջանը կ'ամբողջացնեն յաջողութեամբ:

Այս տարի, 10-րդ տարին ըլլալով, CASPSը պիտի պատուէ փայլուն հայ աշակերտներ, որոնք կը յաճախեն Hoover, Glendale, Crescenta Valley եւ Clark Magnet երկրորդական վարժարանները եւ ապահոված են բարձր միջիններ:

Զանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Զինգշաբթի, 1 Յունիսի երեկոյեան ժամը 5:30-էն սկսեալ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, Կլենտէյլի Brandview Collection սրահին մէջ, ներկայութեամբ հանրային վարժարաններու տնօրէններուն եւ շրջանի կրթական մշակներուն ու պատասխանատուներուն:

CASPS' ANNUAL YEAR-END RECEPTION TO HONOR TOP ARMENIAN STUDENTS

The Committee for Armenian Students in Public Schools (CASPS) has a beautiful tradition of organizing a reception at the end of each school year, to honor the top Armenian students graduating from public schools.

This year, the 10th annual reception will honor students from Hoover, Glendale, Crescenta Valley, and Clark Magnet High Schools.

The reception will be held on Thursday, June 1, at 5:30 p.m., under the auspices of the Prelate, at Glendale's Brandview Collection. In attendance will be principals and educators from the community.
